ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ

ՀԱՂԹԱՆԱԿԻ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ հայրենակիցներ,

Այս տարի լրանում է Մեծ հայրենական պատերազմում տարած հաղթանակի 80-ամյակը։

1945 թվականի այս օրը հռչակվեց ազատության և ֆաշիզմի դեմ տարած համաշխարհային հաղթանակը, որի մեջ իր արժանի ներդրումն ունեցավ նաև հայ զինվորը։

Խոնարհվում ենք բոլոր նրանց հիշատակի առաջ, ովքեր իրենց կյանքով կերտեցին մեր ապրելու իրավունքը։ Եվ շարունակում ենք ապրել՝ այդ իրավունքին արժանի։

Շնորհավորում եմ բոլորիդ Հաղթանակի օրվա կապակցությամբ և ուզում շեշտել, որ մայիսի 9-ը մեզ համար պատգամ է, որ հաղթանակները չպետք է փնտրել միայն անցյալում։ Դրանք ծնվում են այն պահին, երբ ժողովուրդը չի հանձնվում՝ ո՛չ ճակատագրին, ո՛չ ժամանակին։ Սա պատասխանատվության օր է՝ հիշողությունն արժանիորեն կրելու, և ամեն նոր օրը նույն կամքով կառուցելու։

Ամենայն հարգանքով՝
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ